ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հր.-1, 2201, հեռ. (0222) 2-03-65, (060) 447-000, էլ. հասցե abovyan.kotayq@mta.gov.am

04 փետրվարի 2025թ.N Ե-695

ԱՁ ԷՎԵԼԻՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ԱՆՀԱՏ ՁԵՌՆԵՐԵՑ
ԷՎԵԼԻՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հարգելի Է. Գրիգորյան

Աբովյանի համայնքապետարանի (այսուհետ՝ Գնորդ) և «Էվելինա Գրիգորյան» անհատ ձեռնարկատիրոջ (այսուհետ՝ Վաճառող) միջև 16.12.2024 թվականին կնքվել է «ԱԲՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/01-2» ծածկագրով ապրանքի մատուցման պայմանագիր:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» թիվ 526-Ն որոշման Հավելված 1-ի 33-րդ կետի 12-րդ ենթակետը, 104-րդ կետը և Աբովյանի համայնքապետարանի և «Էվելինա Գրիգորյան» անհատ ձեռնարկատիրոջ միջև «ԱԲՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/01-2» ծածկագրով կնքված Պայմանագրի 8.5, 8.15 կետերը՝ «Էվելինա Գրիգորյան» անհատ ձեռնարկատիրոջն ուղարկվել է ծանուցում և առաջարկվել կնքել համաձայնագրեր, սակայն վերջինս հրաժարվել է և օրենքով սահմանված ժամկետում չի ներկայացրել իր կողմից հաստատված համաձայնագրերը:
Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:
ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:
Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարել իր պարտականությունները»:
ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:
Ելնելով վերոգրյալից՝ Աբովյանի համայքնապետարանի և «Էվելինա Գրիգորյան» անհատ ձեռնարկատիրոջ միջև կնքված «ԱԲՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/01-2» ծածկագրով Պայմանագիրը

միակողմանի լուծվում է Պատվիրատուի կողմից:
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր (համաձայնագիր) կնքելու իրավունքից: Ընդ որում սույն կետում նշված որոշումը Պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և ավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքում որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:
Այսպիսով՝ Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշումը կներկայացվի լիազոր մարմին՝ «Էվելինա Գրիգորյան» անհատ ձեռնարկատիրոջը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, իսկ մատակարարի կողմից պայմանագիր կնքելու նպատակով ներկայացրած որակավորման 1985815,5 /մեկ միլիոն ինը հարյուր ութսունհինգ հազար ութ հարյուր տասնհինգ դրամ, հինգ լումա/ ՀՀ դրամ և պայմանագրի 1323877 / մեկ միլիոն երեք հարյուր քսաներեք հազար ութ հարյուր յոթանասունյոթ/ ՀՀ դրամ ապահովումները միակողմանի հաստատված հայտարարության տուժանքի ձևով կներկայացվեն մատակարարին սպասարկող բանկ՝ գումարները գանձելու նպատակով:
Ընդունել ի գիտություն.
Եթե «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա, բ ենթակետերով նախատեսված լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարում է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին և եթե մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվում է լիազորված մարմին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան մասնակցին կամ պայմանագիր կնքած անձին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Է. ԲԱԲԱՅԱՆ**

Կատ. Գնումների բաժնի պետ
Ա. Ծատրուրյան
+37460536402